Արձանագրության 3

«ԵՔ-ՀԲՄԾՁԲ-19/6» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 28.08.2019թ,. Ժամը՝ 11:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Կիրակոսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Սարգսյան, Ա. Հովհաննիսյան, Ա. Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Կ. Հարությունյանը բացակա է

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Կիրակոսյան

1. Պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մասին

(Ա. Կիրակոսյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ իարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց հարկային պարտավորություն:

«Գոլդ-Նեթ» ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացվել որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը: Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի դրույթով՝ որոշեց նիստը ընդհատել և ծանուցել մասնակցին երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում անհամապատասխանությունը շտկելու դեպքում մասնակցի հայտը կգնահատվի բավարար, հակառակ դեպում կգնահատվի անբավարար և կմերժվի:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4 դեմ - 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Ա. Կիրակոսյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 03.09.2019թ. ժամը 10:00-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 2-րդ հարկ 224/1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Կիրակոսյան

Անդամներ՝ ---------- Կ. Հարությունյան

---------- Ա. Սարգսյան

---------- Ա. Հովհաննիսյան

---------- Ա. Հարությունյան

Քարտուղար՝ ---------- Ն. Կիրակոսյան